

# Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշար

2020-2021 ուստարի – 150 թույլ

11-րդ դասարան

1.Վարդան Այգեկցու կյանքն ու գործունեությունը: Այգեկցու անունով հայտնի առակների սկզբնաղբյուրները: Առակների հիմնական մոտիվները: Ակսել Բակունցը Այգեկցու առակների փոխադրող: Թվարկի՝ XX դարի մի քանի առակագիրներ: 5 մ.

2.Ո՞վ է Նար- Դոսը. ո՞վ է նրան առաջարկել այդ գրական կեղծանունը: Ե՞րբ է գրել «Մեր թաղը» պատմվածաշարը, ովքե՞ր են հերոսները: Շարքի հերոսները ինչի՞ զոհ են դառնում: Ի՞նչն է քննադատում Նար- Դոսը այս շարքի յոթ նորավեպերում: 5 մ.

3.Գրիգոր Չոհրապը՝որպես հայության դատի պաշտպան: Չոհրապի իրապաշտությունը: Սիրո արվեստը: Կնոջ առեղծվածը Չոհրապի նորավեպերում: 5 մ.

4.«Տանջանքն է, որ կբարձրացնե հոգին, տառապանքն է, որ կմաքրե: Եվ կյանքի ամենեն խոր բանը մահն է»:«Տառապանքը կյանքի խոցն է, իսկ մահը՝ կյանքի քայքայումը»:

Ո՞ւմ է բնութագրում ըստ էության երկու տարբեր ձայներով մենախոսությունը:

Ո՞ր ստեղծագործության մեջ է բնութագրվում այս խիստ հակասական կերպարը: Գրի՞ր կարծիքդ և հիմնավորի՞ր:

5 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝

Ս.Աբազյան